ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/73

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/01 ծածկագրով հրատապ բաց մրցույթի (հետայսու նաև՝ Մրցույթ) շրջանակներում 13.08.2020թ. «Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի համանման բողոքը (վարույթ ընդունված 14.08.2020թ.) (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/73 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 13.08.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«*Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը*

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն բժշկական սարքավորման՝ համակարգչային տոմոգրաֆի ձեռքբերման նպատակով հայտարարել է ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի մասին հայտարարություն 1 չափաբաժնով.

Չափաբաժին ների համարները	Չափաբաժնի անվանումը
1	Համակարգչային տոմոգրաֆ

Սույն չափաբաժնի տեխնիկական բնութագրի մեջ դրված են այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են բացառապես CANON AQUILION LIGHTNING 16/32 համակարգչային տոմոգրաֆի տեխնիկական նկարագրին. վերջինիս տվյալները կարող եք տեսնել հետևալ կայքում. https://medpribor.pro/product/canon-aquilion-lightning/

Հրավերով սահմանված պահանջները հակասում են ՀՀ Գնումների օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներին և 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 22-րդ կետի դրույթներին

Հոդված 3.

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

526-Ն որոշման 22-րդ կետ.

22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

2. *Բողոքի պահանջը*

Կիրառել ՀՀ Գնումների մասին օրենքով և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման դրույթներով, ֆինանսների նախարարի 2018թ. -ի դեկտեմբերի 6-ի N 600-Ն հրամանով, ինչպես նաև Գնումների մասին ՀՀ օրենսդրական այլ իրավական ակտերով նախատեսված բոլոր անհրաժեշտ քայլերը՝

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի հայտարարության մասին հրավերում կատարել փոփոխություններ կամ չեղարկել մրցույթը՝ ապահովելով սույն գնման ընթացակարգին հնարավոր մասնակիցների հավասար և անկողմնակալ մասնակցությունը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.08.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից համանման բողոքով ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն 13.08.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«2020 թվականի հուլիսի 20-ին «Կապանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հրապարակվել է ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավեր: Հրավերով սահմանվում է, որ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 15-րդ օրը՝ «04» օգոստոս 2020թ, ժամը 11:00-ին:

Հրավերով սահմանվում է, որ այն կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մեր ընկերությունը, հանդիսանալով բժշկական սարքավորումների խոշորագույն մատակարարներից մեկը ՀՀ-ում, ինչպես նաև ունենալով այս մրցույթում ընդգրկված

համակարգչային տոմոգրաֆի նմանատիպ սարքերի մատակարարման և սպասարկման հարուստ փորձ, հետաքրքրված էր մրցույթին մասնակցությամբ:

Սակայն, հրավերի ուսումնասիրության ընթացքում մեզ համար պարզ դարձավ, որ մրցույթով նախատեսված սարքի բնութագիրը ոչ մրցակցային է և կազմված է հետևալ օրենսդրական կետի խախտմամբ.

Հայաստանի Հանրապետության կառավարության առ 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն որոշման (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1454-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ) 5-րդ կետի, Պատվիրատուն պարտավոր է.

5) 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:»

Իրականում, մրցույթի տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է միայն Canon Medical Systems ընկերության արտադրության Aquilion Lightning 16 մոդելի համակարգչային տոմոգրաֆին, ինչում կարող եք համոզվել https://medpribor.pro/product/canon-aquilion-lightning/ և https://umetex.ru/catalog/diagnosticheskoe-oborudovanie/tomografy/aquilion-lightning/ կայքերում տեղադրված վերոնշյալ սարքի բավականին մանրամասն տեխնիկական բնութագրերից:

Տեխնիկական բնութագրերի համեմատությունը կատարվել է GE Healthcare, Siemens, Philips և Hitachi արտադրողների սարքավորումների հետ: Այս արտադրողների ոչ մի մոդել ամբողջապես չի համապատասխանում պահանջվող տեխնիկական բնութագրին:

Հասկանալով, սակայն, որ վերը նշված՝ տեխնիկական բնութագրի ոչ մրցակցային լինելու փաստը կարող է բավարար հիմնավոր չհամարվել Բողոք Քննող Անձի կողմից, սկսեցինք ավելի մանրամասն ուսումնասիրել մրցույթի հրավերը, ինչի արդյունքում էլ պարզ դարձավ, որ առկա են անհամապատասխանություններ՝ գնումների գործընթացը

կարգավորող Գնումների մասին ՀՀ օրենքի և իրավական ակտերի տարբեր պահանջների նկատմամբ:

Այսպես օրինակ.

1. Ընթացակարգի տեսակը՝ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ է, այսինքն, ենթադրվում է, որ Պատվիրատուն իրոք ունի այս ապրանքի ձեռքբերման կարիքը, ընդ որում՝ շատ սեղմ ժամկետներում: Ձեր ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ չնայած կարիքի հրատապությանը, մրցույթը հայտարարված է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Ինչ վերաբերում է ժամկետներին. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ 23-րդ հոդվածի 5-րդ կետի գ) ենթակետով սահմանվում է, որ.

գ. չկանխատեսված իրավիճակների հետևանքով առաջացած և հրատապ համարվող գնումների դեպքում՝ բացառությամբ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու դեպքերի: Ընդ որում, հրատապ է համարվում այն կարիքը, որը պետք է ամբողջ ծավալով բավարարվի՝ պայմանագրի կատարման արդյունքն ամբողջ ծավալով ընդունվի գնման պահանջի ծագման օրվանից մինչև երեսուն օրացուցային օրվա ընթացքում՝ պայմանով, որ հրատապ համարվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվեն այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Այս դեպքում անհասկանալի է մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցով սահմանված մատակարարման ժամկետը, այն է՝

«Ապրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում»:

2. Ըստ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ 526-Ն որոշման՝

16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի

հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

18. Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

«Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի՝ տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերջին փոփոխությունը 01.07.2020թ. ամսաթիվն է կրում, սակայն այստեղ մենք չկարողացանք գտնել Տոմոգրաֆիկ սարք կամ համակարգչային տոմոգրաֆ տողը, որը անհրաժեշտ էր ներառել գնումների պլանում, նույնիսկ եթե դրա համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն (տես՝ կից):

Մյուս կողմից՝ PPCM համակարգում «Կապանի ԲԿ» ՓԲ ընկերության գնումների պլանում տոմոգրաֆիկ սարքեր տողը կա, բայց այստեղ էլ գնման ենթակա քանակը 0 է (տես՝ կից)»:

Ամփոփելով՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է, հաշվի առնելով ներկայացված փաստերը և իրավական հիմքերը, պարտավորեցնել ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի Պատվիրատուին չեղյալ հայտարարել ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/1 մրցույթը:

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.08.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած փաստերը, հիմնավորումները.

«Կապանի ԲԿ» ՓԲԸ-ն «Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

««Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Covid-19 համավարակի տարածման առաջին իսկ օրից զբաղվում է հիվանդության տարածման, կանխարգելման և հիվանդների բուժման գործով: Մենք հանդիսանում ենք հանրապետությունում վերապրոֆիլավորված բժշկական կազմակերպություններից մեկը, որտեղ իրականացվում է Սյունիքի մարզի covid-19-ով հիվանդների բուժումը:

Հիվանդության բուժման արդյունավետ կազմակերպման գործում մեծ նշանակություն ունի ճիշտ և ժամանակին ախտորոշումը: ՀՀ Սյունիքի մարզպետարանի՝ Կապանի ԲԿ-ի հիմնադրի հետ խորհրդակցելով և նրանց համաձայնությամբ, որոշում է կայացվել ձեռք բերել համակարգչային տոմոգրաֆ: Քանի որ Կապանի ԲԿ-ի ֆինանսական միջոցները չեն բավարարում նման թանկարժեք սարք ձեռք բերելու համար, ապա մարզային իշխանությունները խոստացել են աջակցել այդ հարցում:

Նման որոշում կայացնելուց հետո սկվել է գնման գործընթացի կազմակերպումը: Պատասխանատու ստորաբաժանումը ուսումնասիրելով շուկայում առկա համակարգչային տոմոգրաֆների տեխնիկական բնութագրերը, կազմել է գնման հայտ, որի հիման վրա էլ կազմակերպվել է մրցույթը:

Գնման հայտը կազմվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների և Գնումների կարգի 22-րդ կետի համաձայն: Գնման հայտով առաջարկվող տեխնիկական բնութագրին համապատասխանում են առնվազն 5 մոդելի տարբեր արտադրողների տոմոգրաֆների:

Գնման հայտի հիման վրա կազմակերպվել է հրատապ բաց մրցույթ, որի հայտերի բացումը պետք է տեղի ունենար «04» օգոստոս 2020թ-ի ժամը 11:00-ին: Սակայն հայտերի ներկայացման ժամկետը լրանալուց հետո պարզվեց, որ ոչ մի հայտ մրցույթին չի ներկայացվել: Եվ այդ ամենի պատճառը հրավերում ներառված տեխնիկական բնութագրում առկա վրիպակն է: Տեխնիկական վրիպակի պատճառով, մեկ ցուցանիշի շեղումով, ոչ մի արտադրողի տոմոգրաֆ ամբողջությամբ չի համապատասխանում պահանջներին /կից կցվում է տեխնիկական բնութագրերի համեմատականը/:

Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում: Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Ցանկանում եմ տեղեկացնել, որ ոչ մի պարզաբանման հարցում չենք ստացել: Եղել են մի

քանի հեռախոսազանգեր, որոնք վերաբերվում էին տեխնիկական բնութագրի այլ ցուցանիշներին: Հետևաբար այդ վրիպակը մինչև վերջ մնացել էր աննկատ և անփոփոխ, որի արդյունքում էլ գրանցվել է ստեղծված իրավիճակը:

Գնման ընթացակարգի ընտրության վերաբերյալ.

Գնման առարկայի նախահաշվային գինը ըստ գնման հայտի 140 000 000 ՀՀ դրամ է, ուստի գնումը պետք է կատարվեր մրցույթով: Covid-19-ով հիվանդների բուժման գործում կարևորելով ճիշտ և ժամանակին ախտորոշումը, սույն գնման գործընթացը դասակարգվել է հրատապ համարվող գնումների շարքին: Ընտրվել է մրցույթի կազմակերպման հրատապ բաց մրցույթ ընթացակարգը:

Մատակարարման ժամկետի վերաբերյալ.

Պատասխանատու ստորաբաժանման կողմից ընտրվել է մատակարարման «60 օրացուցային օր» ժամկետը, հաշվի առնելով այն փաստը, որ տոմոգրաֆի կարգի թանկարժեք սարքավորումների ձեռք բերման և մատակարարման համար պահանջվում է բավականին երկար ժամանակ ըստ մատակարարների: Հաշվի է առնվել նաև աշխարհում Covid-19-ի հետ կապված բեռնափոխադրումների ոլորտում առաջացած իրավիճակը: Ուստի և ընտրվել է մատակարարման «60 օրացուցային օր» ժամկետը:

Ընթացակարգը «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կազմակերպելու վերաբերյալ.

Գնումը կազմակերպվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, քանի որ Կապանի ԲԿ-ն մրցույթը կազմակերպելու պահին նման ֆինանսական միջոցներ չուներ և սեփական միջոցներով նշված թանկարժեք սարքը ձեռք բերել չի կարող: Ինչպես նշել ենք գրության սկզբում այդ հարցը պետք է լուծվի հիմնադրի՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աջակցությամբ՝ մրցույթի արդյունքում կնքված պայմանագրի առկայության դեպքում:

Գնումների պլանի վերաբերյալ.

«Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի գնումների պլանը /լրացում/ հրապարակվել է www.gnumner.am կայքում սույն թվականի հուլիսի 20-ին ժամը 11:48:54-ին/ կից կցվում է/ /http://www.gnumner.am/hy/page/gnumneri_planner/17/: ԳՊՊԿ համակարգում մրցույթ կազմակերպելիս քանակ դաշտում պետք է նշված լինի քանակը, այլապես էլեկտրոնային մրցույթ կազմակերպել հնարավոր չէ՝ համակարգը հնարավորություն չի տալիս: Կցում

ենք համակարգողի PPCM համակարգի էջում մրցույթի վերաբերյալ ինֆորմացիան, որտեղ հստակ երևում է քանակը՝ 1»:

«Կապանի ԲԿ» ՓԲԸ-ն «Ար-Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«*Գնման ընթացակարգի ընտրության վերաբերյալ.*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն. «Գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է, եթե գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ նույն մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում: Գնումները կարող են կատարվել գնման այլ ձևերով, բացառապես սույն օրենքով նախատեսված դեպքերում:»

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Գնումը կարող է կատարվել գնանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, և գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում:»

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար համակարգչային տոմոգրաֆի ձեռք բերման նպատակով գնման հայտով նախատեսված է 140 000 000 դրամ նախահաշվային գին, հաշվի է առնվել այն փաստը, որ դրանից ավել գումար հնարավոր չի լինելու հանգանակել: Նշանակում է «Գնումների մասին» օրենքի համաձայն պետք է պազմակերպվի բաց մրցույթ:

Մրցույթը հրատապ է մեր կողմից դասակարգվել, նման սարքի կարիքից ելնելով covid-19-ով հիվանդների բուժման գործում:

Եթե տեխնիկական բնութագրում գրվեր մատակարարման ավելի կարճ ժամկետ, ապա դա նույնպես բողոքի առիթ կլիներ, քանի որ ըստ մատակարարների նման սարքերի ձեռքբերման համար ավելի երկար ժամանակ է ծախսվում: Եվ ինչու չէ մատակարարման կարճ ժամկետը էականորեն կարող է ազդել ապրանքի գնի վրա:

Գնումների պլանի վերաբերյալ.

Գնումների պլանը հրապարակվել է որոշակի ժամկետային խախտումներով, որը կարծում ենք էական նշանակություն չի կարող ունենալ մրցույթին հավասար մրցակցային

պայմաններ ապահովելու գործում:

Գնման առարկայի տեխնիկական բնութագրի վերաբերյալ.

Գնման առարկայի տեխնիկական բնութագրերը սահմանելիս պատասխանատու ստորաբաժանումը նաև կողմնորոշվել է նախատեսված նախահաշվային գումարով, և դրանից էլ ելնելով ընտրվել է տեխնիկական բնութագիր, որը հնարավորություն կտար մրցույթի արդյունքում ձեռք բերել այդ գումարի սահմաններում տոմոգրաֆ: Կարևոր է այն փաստը, որ նշված բնութագրին գրեթե համապատասխանում են հինգ տարբեր մոդելների և արտադրողների տոմոգրաֆներ»:

Ամփոփելով՝ Պատվիրատուն խնդրել է բողոքի քննման ժամանակ հաշվի առնել ներկայացված փաստերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.08.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/73 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/73 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/01 ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***20.07.2020թ.***:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի համանման բողոքը, «Կապանի ԲԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումները, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **<u>տեղեկագիրը</u> նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության <u>հրապարակման նպատակով</u>** ***<u>www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է</u>***:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>գնումների պլանը</u>***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***<u>պարտադիր հրապարակում է տեղեկագրում</u>***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ **<u>գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում</u>: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ <u>գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը</u> սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով <u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում</u> գրավոր սահմանվում են՝**

<u>1) **պատասխանատու ստորաբաժանում,** և</u>

<u>2) գնումները համակարգող</u>

<u>3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:</u>

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:…

3) **գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության՝ նշելով հանձնաժողովի նախագահի թեկնածությունը**: …

Կարգի 31-րդ կետի համաձայն՝ **գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝**

1) գնումների կամ նախաորակավորման հայտարարության տեքստը.

2) հրավերի տեքստը.

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ Պատվիրատուի կողմից որպես գնումների պլան ներկայացված 2020 թվականի գնումների պլանում փոփոխությունների և/կամ լրացումների մասին ծանուցումը, ինչպես նաև Մրցույթի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել են ***20.07.2020թ.***, այսինքն նույն օրը, մինչդեռ վերոհիշյալ նորմերից բխում է, որ **պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից, հետևաբար Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը գնումների պլանը հրապարակելու օրը, այն է՝ 20.07.2020թ., դեռևս օժտված չի եղել գնման հայտը հաստատելու իրավասությամբ:**

Ինչպես նաև Կարգի 21-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը իրավասու չէր գնման պահանջի ծագման օրը կազմել գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող**

անձանց (թեկնածուների) ցուցակը, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովը, կազմավորվելու արդյունքում, Կարգի 31-րդ կետի համաձայն՝ իրավասու կլիներ հաստատելու գնումների հայտարարության և հրավերի տեքստը, իսկ գնումների համակարգողը իրավասու չէր իրականացնելու Կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից տեղեկագրում 20.07.2020թ. հրապարակվել է 2020 թվականի գնումների պլանում փոփոխությունների և/կամ լրացումների մասին ծանուցումը՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի 20 մայիսի N 231-Ն հրամանով հաստատված գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու ծանուցման օրինակելի ձևին համապատասխան, մինչդեռ արձանագրում եմ, որ առկա չէ ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգի» համաձայն և սահմանված պահանջներին համապատասխան տեղեկագրում հրապարակված գնումների պլանը:

Այսպիսով՝ վերը նշված փաստերով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/01 ծածկագրով մրցույթը կազմակերպվել է ոչ իրավաչափ, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 15-րդ, 16-րդ, 17-րդ, 20-րդ, 21-րդ և 31-րդ կետերով սահմանված պահանջները, ուստի գտնում եմ, որ Մրցույթը պետք է հայտարարվի չկայացած:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մրցույթն ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստիև այն հայտարարվում է չկայացած, ուստի նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում քննության առարկա չի դարձնում «Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ-ի բողոքով և «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի համանման բողոքով նաև վիճարկվող ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/01 ծածկագրով հրատապ բաց մրցույթի տեխնիկական բնութագրի իրավաչափության հարցը, հետևաբար գտնում եմ, որ «Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ-ի բողոքի պահանջը, այն է՝ պարտավորեցնել Պատվիրատուին «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի

հայտարարության մասին հրավերում կատարել փոփոխություններ կամ չեղարկել մրցույթը՝ ապահովելով սույն գնման ընթացակարգին հնարավոր մասնակիցների հավասար և անկողմնակալ մասնակցությունը, ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:
2. «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի համանման բողոքը բավարարել.

պարտավորեցնել ՍՄԿԲԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/01 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին Մրցույթը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**